

**«ՉԱՅՐՈՒՅԹ» / «RABBIA» ՀՈՒՉԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՆՎԱՆՄԱՆ  
ՀՈՍԱՆԻՇԱՅԻՆ ՇԱՐՔԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ**

*Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «զայրույթ» (“rabbia”) հուզական հասկացության անվանման բառային միջոցները իտալերենում: Հոդվածում բաղադրական վերլուծության են ենթարկվում “rabbia” բառի հոմանիշային շարքը կազմող գոյականները, որի արդյունքում առանձնացվում են իմաստային այն տարբերակիչ հատկանիշները, որոնք թույլ են տալիս սահմանազատել «զայրույթ» հասկացության անվանող բառային միավորների իմաստային դաշտերը իտալերենում:*

**Քանալի բառեր.** *հուզական հասկացույթ, հոմանիշային շարք, բաղադրական վերլուծություն*

Հասկացույթը, լինելով մտքային միավոր, առարկայանում է բառային միավորների՝ բառերի, դարձվածքների, ասացվածքների և առածների միջոցով: Ուստի հասկացույթների, այդ թվում և հուզական հասկացույթների ուսումնասիրության լավագույն եղանակներից մեկն է համարվում նրանց անվանման բառային միջոցների վերլուծությունը: Բառային միջոցները հուզական հասկացույթների ներկայացման կարևոր աղբյուր են, քանի որ տարբեր մշակույթների ներկայացուցիչների կողմից այդ հասկացույթների ընկալման և իմաստավորման ընդհանրությունները և առանձնահատկությունները առավելապես դրսևորվում են հենց բառային միջոցներում: Բացի այդ, բառը ինքնին ժողովրդի կողմից կուտակած որոշակի տեղեկության կրող է, արտացոլում է ազգի փորձը և նրա պատկերացումը շրջակա միջավայրի մասին:

Հույզերը երբեք հանդես չեն գալիս մաքուր, հստակ տարբերակված ձևով, այդ պատճառով նրանց խոսքային նույնականացումը միշտ սուբյեկտիվ է /Diller, 1992: 26-27/: Միևնույն հույզը տարբեր անձանց կողմից արտահայտվում է տարբեր կերպ՝ կախված բազմաթիվ գործոններից, այդ թվում նաև արտալեզվական: Հույզերի անվանման միջոցների ընտրության հարցում մեծ դեր ունեն ազգամշակութային առանձնահատկությունները:

Ուսումնասիրվող «զայրույթ» հուզական հասկացույթն անվանող բառային միավորը իտալերենում *rabbia* բառն է: Սակայն տվյալ անվանման միջոցը, ինչպես ցանկացած այլ բառ, լեզվում գոյություն ունի ոչ թե մեկուսացած, այլ հանդես է գալիս ուրիշ բառերի հետ զանազան հարաբերությունների մեջ՝ կազմելով որոշակի համակարգ: Միմյանց հետ բառերը կարող են միավորվել ըստ քերականական հատկանիշի ընդհանրության, ըստ ձևային ընդհանրության և վերջապես, ըստ իմաստային ընդհանրության: Բառերի միջև իմաստային հարաբերությունների կարևորագույն ձևը հոմանիշությունն է /Воркачев, цит. по: Дорощева, 2002: 93 – 94/:

Հոմանիշության հիմնական չափանիշը բառիմաստն է, բառերի իմաստային մոտությունը կամ նույնությունը: Իմաստով իրար հետ կապված, այսինքն՝ մոտ կամ նույն իմաստ ունեցող բառերը կազմում են հոմանիշների փակ շարք, որը լեզվի տվյալ համաժամանակյա վիճակի համար տեսականորեն չի կարող ոչ ընդարձակվել, ոչ էլ կրճատվել, այսինքն՝ հարաբերականորեն այն կայուն է /Սուքիասյան, 1999: 126/:

Մեր ուսումնասիրության նպատակը «զայրույթ» հասկացության անվանող բառային միավորների իմաստային ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների բացահայտումն է խտալերենում՝ հիմնված *rabbia* բառի հոմանիշային շարքի մեջ մտնող բառերի բաղադրական վերլուծության վրա: Ինչպես ուսումնասիրության մյուս հնարները, բաղադրական վերլուծության մեթոդը նույնպես գործնականում չի կիրառվում «մաքուր» տեսքով: Այն համակցվում է նկարագրական, համեմատական, վիճակագրական մեթոդների հետ:

*Rabbia* բառն ունի հետևյալ հոմանիշային շարքը (ըստ Չինտիի հոմանիշների/հականիշների բառարանի). *Rabbia - idrofobia// arrabbiatura – ira – collera – stizza – irritazione – indignazione – sdegno – furore – furia /Cinti, 2006/:*

«Չայրույթ» հասկացության անվանող հոմանիշային շարքի գլխավոր անդամը *rabbia* բառն է: Որոշ բացատրական բառարաններում /De Mauro, 2000, Sabatini, 1999, Trecciani.it, Cinti, 2006/ որպես այս բառի առաջին իմաստ նշվում է նրա գրական, սկզբնական իմաստը, այն է՝ *կենդանիների և մարդկանց սուր վարակիչ հիվանդություն*: Այս հիվանդությունը արտահայտվում է հիմնականում կենտրոնական նյարդային համակարգի ախտահարմամբ, ուղեկցվում է շարժիչ կենտրոնների սուր գրգռվածությամբ, շնչառական ու կլման մկանների ջղաձգումներով, անդամալուծությամբ և վերջանում մահով: Հիվանդությունը փոխանցվում է հիմնականում կծեղու միջոցով: Հիվանդության ընթացքում նույնիսկ ջրի ձայնից կամ բաժակի տեսքից կարող են առաջանալ մկանների ջղաձգություններ, շնչառական ու կլման մկանների ուժեղ կծկումներ /Sabatini, 1999, De Mauro, 2000/:

Ժամանակակից լեզվում, սակայն, *rabbia* բառն առավել հաճախ օգտագործվում է մարդու զայրացած հոգեվիճակ արտահայտելու համար: Այն սահմանվում է որպես հոգեվիճակ, որը բնութագրվում է ուժեղ բարկությամբ և հաճախ ուղեկցվում է անվերահսկելի գործողություններով կամ բառերով. պայմանավորված է լինում անախորժություններով, դժվարություններով, հիասթափություններով, անկարողության զգացողությամբ և այլն /Garzanti, 2006, Sabatini, 1999/, կամ՝ բուռն բարկություն, որն առաջանում է սեփական անկարողության զգացողությունից կամ հանկարծակի հիասթափությունից կամ ձախողությունից /Treccani.it/:

Այս բառն ունի այլ իմաստներ ևս՝ անզուսպ մոլեգնություն, ցասում, ինչպես նաև՝ վայրի կենդանիների կատաղություն /De Mauro, 2000/, որևէ ցանկություն կամ նպատակ իրագործելու համառություն, հետևողականություն, նվիրվածություն /De Mauro, 2000, Sabatini, 1999/, բուռն, անվերահսկելի ցանկություն, բաղձանք /De Mauro, 2000, Sabatini, 1999/, բնության տարրերի կամ երևույթների սաստկացում /De Mauro, 2000, Sabatini, 1999/, որոշ բույսերին բնորոշ հիվանդություն /De Mauro, 2000/: Ծագել է ուշ լատիներենի *rābiam* բառից (class. *rābiem* = *morbis caninus*) /Sabatini, 1999/:

Իր գրական իմաստով, որն է՝ հիվանդություն, որով հիվանդանում են որոշ կենդանիներ, և որը կարող է փոխանցվել նաև մարդուն, *rabbia* բառը հոմանիշ է *idrofobia* (ջրվախություն) բառին, որը բժշկագիտական եզրույթ է և մատնանշում է այդ հիվանդությամբ վարակված մարդկանց խորշումը ջրից /Cinti, 2006/, և ամենևին չի առնչվում *զայրույթ* հույզի հետ: Ուստի *idrofobia* բառը չի ընդգրկվի *rabbia* բառի հոմանիշային շարքի բաղադրային վերլուծության մեջ:

*Ira* բառը, որը պատկանում է լեզվական ավելի բարձր ոճին, սահմանվում է որպես ուժգին զայրույթի հոգեվիճակ, որը կարող է դրսևորվել զայրացած

բառերի և ագրեսիվ ժեստերի միջոցով /De Mauro, 2000, Sabatini, 1999/, ուղղված է դեպի այն մարդը, ով ուղղակիորեն կամ անուղղակի կերպով, միտումնավոր կամ իր կամքից անկախ առաջացրել է մեր զայրույթը, վիրավորել է մեզ /Sabatini, 1999/: Այս բառի իմաստային կարևոր բաղադրիչներից է ինքնատիրապետության կորուստը /De Mauro, 2000/: Որոշ աղբյուրներում որպես բառի կարևոր իմաստային բաղադրիչ նշվում է նաև վրեժի գործոնը այն մարդու հանդեպ, ով պատճառն է զայրույթի /Treccani.it/: Աստվածաբանության մեջ այն համարվում է յոթ գլխավոր մեղքերից մեկը /De Mauro, 2000, Sabatini, 1999, Garzanti, 2006/, որի էությունը վրեժի բուռն և անզուսպ ցանկությունն է /De Mauro, 2000, Garzanti, 2006/: Սակայն բացի վերը նշված իմաստային բաղադրիչներից *ira* բառը արտահայտում է նաև արդարացի և ազնիվ զայրույթ /De Mauro, 2000, Garzanti, 2006, Treccani.it/, որը արտահայտվում է խելամտորեն և հանգեցնում պատժի կիրառմանը այն մարդու հանդեպ, ով պատճառել է այն /Sabatini, 1999/: Հոգնակի թվով կիրառվելիս այն (*ire*) նշանակում է համընդհանուր անհամերաշխություն, պառակտում /De Mauro, 2000, Sabatini, 1999, Treccani.it/, օրինակ՝ *le ire cittadine - քաղաքացիների պառակտումը, le ire di parte - կողմերի անհամերաշխությունը*: Փոխաբերական իմաստով *ira* նշանակում է բնության տարրերի ցասումը, սաստկացումը /De Mauro, 2000, Sabatini, 1999, Garzanti, 2006, Treccani.it/, օրինակ՝ *ira del vento - քամու ցասումը, ira del mare in tempesta - փոթորկված ծովի ցասումը*: Ծագել է լատիներեն *iram (զայրույթ)* բառից /Sabatini, 1999/:

*Collera* բառով արտահայտվում է զայրույթի և բարկության այն զգացողությունը, որն առաջանում է հանկարծակի /De Mauro, 2000, Garzanti, 2006/ և դրսևորվում է սաստիկ բառերով և ագրեսիվ գործողություններով /De Mauro, 2000, Garzanti, 2006, Sabatini, 1999, Cinti, 2006/: Կարող ենք փաստել, որ *collera* բառի տարբերակիչ իմաստային բաղադրիչը գրգիռի առաջացման հանկարծակիությունն է: Այս բառը հոմանիշ է *ira* բառին նաև բնության տարրերի զայրույթը փոխաբերաբար արտահայտելու հատկանիշով /De Mauro, 2000, Sabatini, 1999/, օրինակ՝ *la collera del mare - ծովի զայրույթը/ցասումը, la collera dei venti - քամիների ցասումը*: Առաջացել է լատիներեն *chōleram (մաղձ)* բառից /Sabatini, 1999/:

*Stizza* բառը բնութագրվում է որպես հանկարծակի և անցողիկ զայրույթ /Garzanti, 2006, De Mauro, 2000/, կամ վայրկենական զայրույթ, որը ծագում է որպես արձագանք որևէ անախորժության, դժգոհության կամ վիրավորանքի /Sabatini, 1999, Treccani.it/, կամ պարզապես անհամբերությունից /Garzanti, 2006/: Որոշ աղբյուրներում նշվում է նաև, որ այս բառի միջոցով արտահայտվում է հանկարծակի առաջացող, բայց ոչ ուժգին զայրույթը /Treccani.it/: Բառի ծագումնաբանության վերաբերյալ չկա հավաստի տեղեկություն. աղբյուրներում նշվում է, որ այն հավանաբար առաջացել է *stizzo* բառից, որն էլ իր հերթին ծագել է *tizzo* բառից *s* տառի հավելումով: *Tizzo -ի*, որը նշանակում է այրվող կամ արդեն այրված փայտի կամ ածուխի կտոր, ծագել է լատիներեն *tītio* բառից, որը նմանաձայնություն է /Sabatini, 1999/:

*Irritazione* բառով նույնպես արտահայտվում է տհաճության, նյարդայնացման զգացողություն, բայց այս դեպքում խոսքը գնում է զայրույթի էլ ավելի մեղմ դեպքերի մասին /Cinti, 2006/: Այն սահմանվում է որպես զսպված զայրույթ՝ ինչ-որ մեկի, ինչ-որ բանի հանդեպ կամ որևէ ձախողությունից առաջացած /Sabatini, 1999/: Այն ունի այլ իմաստներ ևս, ինչպես օրինակ՝ մարմնի որևէ մասի բոր-

բորբում, օրինակ՝ *irritazione degli occhi, della gola, dell'intestino - աչքերի, կոկորդի, աղիների բորբորում*, իսկ կենսաբանության մեջ այն նշանակում է գրգռում /De Mauro, 2000, Sabatini, 1999, Garzanti, 2006, Treccani.it/: Ծագել է լատիներեն *irritatiōnem* բառից, որը կազմվել է *irritāre* բառից /Sabatini, 1999/:

*Indignazione* բառը սահմանվում է որպես բարոյական գիտակցության ապստամբություն այն բանի հանդեպ, ինչը վիրավորել է /Sabatini, 1999/: Այս բառով արտահայտվող զայրույթը կարող է և չունենալ ագրեսիվ դրսևորում, բայց առաջացնում է բարոյական պարսավանք /Cinti, 2006/: Հարկ է նշել, որ գրեթե բոլոր աղբյուրներում նշվում է, որ նման տեսակի հոգեկան խռովության պատճառ կարող է հանդիսանալ որևէ բան, ինչը կհամարվի դատապարտելի, անբարոյական կամ անպատշաճ /De Mauro, 2000, Treccani.it/: Բառի ստուգաբանությունը կապված է լատիներեն *indignatiōnem* բառի հետ, որը ծագել է *indignāri* «զայրացնել» բառից /Sabatini, 1999/:

*Sdegno* բառը նույնպես բնութագրում է համեմատաբար մեղմ և զուսպ զայրույթ /Cinti, 2006/: Դա վրդովմունքի կամ մեղադրանքի զգացումն է ինչ-որ բանի հանդեպ, ինչը թվում է անարդար կամ անազնիվ, ստոր /De Mauro, 2000/ կամ վիրավորում է բարոյական սկզբունքները և անձնական համոզմունքները /Sabatini, 1999, Treccani.it/: Այն ունի նաև *արհամարհանք, թշնամություն* իմաստները: *Sdegno* բառը կազմվել է *sdegnare* բայից, որն էլ առաջացել է լատիներեն *disdignāre* «արհամարհել, քամահրել» բառից՝ բառասկզբի վանկի կրճատումով /Sabatini, 1999/:

*Furore* բառով արտահայտվում է սաստիկ և անվերահսկելի զայրույթը /De Mauro, 2000, Treccani.it/: Այս և *furia* բառերով արտահայտվում են զայրույթի այն դեպքերը, երբ մարդը ամբողջովին դուրս է գալիս իր ավերից /Cinti, 2006/, օրինակ՝ *gettarsi con furore nella mischia – ցասումով/սաստիկ զայրացած կռվի բռնվել*: Այլ խոսքերով՝ դա ուժեղ հույզն է և հոգու խռովությունը, որի պատճառը զայրույթն է /Garzanti 2006/, կամ ուժեղ հիասթափությունը կամ մեկ այլ բուռն զգացմունք, որը խափանում է սեփական գործողությունների վերահսկողությունը /Sabatini, 1999/: Այս բառով արտահայտվում է նաև բնության ուժերի սաստկությունը, օրինակ՝ *il furore dell'uragano - փոթորկի սաստկությունը* /Sabatini, 1999, De Mauro, 2000, Treccani.it/: Ծագել է լատիներեն *furōrem* բառից, որը կազմվել է *fūrere* «զայրանալ» բառից /Sabatini, 1999/:

*Furia* բառը իր իմաստային նրբերանգներով մյուս հոմանիշներից ավելի մոտ է *furore* բառին, քանի որ այն ևս արտահայտում է հոգու մեծ խռովություն, անվերահսկելի զայրույթ, որը դրսևորվում է անզուսպ և բուռն գործողություններով և բառերով /De Mauro, 2000, Sabatini, 1999, Treccani.it/, ինչպես նաև՝ զայրույթի, բարկության պոռթկում /Sabatini, 1999/, որը մեծ մասամբ լինում է կարճատև /Treccani.it/: *Furia*-ն ունի նաև այն իմաստներ, ինչպես օրինակ՝ 1. ուժ, ուժգնություն, սաստկություն (այդ թվում և բնության երևույթների) 2. հարկադրական շտապողականություն, աճապարանք, օրինակ՝ *ho furia di arrivare – շտապում եմ հասնել*, /De Mauro, 2000, Sabatini, 1999/: *Furia* բառով անվանում են նաև զայրացած մարդուն: Բառը ծագել է լատիներեն *fūram* բառից, որը կազմված է *fūrēre* «զայրանալ» բառից /Sabatini, 1999/:

*Arrabbiatura* բառը արտահայտում է զայրացած, խռովված հոգեվիճակ /Treccani.it, De Mauro, 2000/, ինչպես նաև՝ զայրանալը /Sabatini, 1999/: Չունի

ոճական նշույթավորվածություն, ինչպես նաև տարբերակիչ իմաստային բաղադրիչներ: Ուստի վերլուծության ենթարկելու համար պետք է հիմնվենք բացատրական բառարաններում նշված ամենամոտ հոմանիշների իմաստային հատկանիշների վրա, որոնք են՝ *rabbia, ira*, իսկ խոսակցական լեզվում՝ *incavolatura* և *incazzatura* բառերը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս դեպքում խոսքը գնում է զայրույթի ուժեղ, անվերահսկելի դեպքերի մասին, որոնք ուղեկցվում են ագրեսիվ գործողություններով կամ բառերով: Կազմված է *arrabbiare* բառով և *-tura* վերջածանցով:

	Rabbia	Ira	Collera	Stizza	Irritazione	Indignazione	Sdegno	Furore	Furia	Arrabbiatura
Չայրացած հոգեվիճակ	+	+	+	+	+	+	+	+	+	+
Ուժգին, սաստիկ	+	+	+	-	-	-	-	+	+	+
Մեղմ	-	-	-	+	+	+	+	-	-	-
Անվերահսկելի (ինքնատիրապետության կորուստ)	+	+	+	-	-	-	-	+	+	+
Չուսպ, վերահսկելի	-	-	-	+	+	+	+	-	-	-
Հանկարծակի ծագող	-	-	+	+	-	-	-	-	-	-
Ագրեսիվ գործողությունների, ժեստերի, բառերի գործածություն	+	+	+	-	-	-	-	+	+	+
Կարճատև, անցողիկ	-	-	-	+	-	-	-	-	+/-	-
Վրեժի բուռն ցանկություն	-	+	-	-	-	-	-	-	-	-
Արդարացի, ազնիվ զայրույթ	-	+	-	-	-	+	+	-	-	-
Համընդհանուր անհամերաշխություն	-	+	-	-	-	-	-	-	-	-
Կրոնական մոտիվներ	-	+	-	-	-	-	-	-	-	-
Փոխաբեական կիրառություն բնության տարրերի վերաբերյալ	+	+	+	-	-	-	-	+	+	-

Բաղադրային վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

- Հոմանիշային շարքի բոլոր անդամները միավորվում են մեկ իմասկով՝ *զայրացած հոգեվիճակ*: Չկա որևէ այլ հատկանիշ, որը ընդհանուր լինի բոլոր անդամների համար:
- Չայրույթի առավել ուժգին դրսևորումները արտահայտվում են *rabbia, ira, collera, furore, furia, arrabbiatura* բառերով, որոնց գործածությունը ենթադրում է ինքնատիրապետության կորուստ, ինչի հետևանքով մարդ կարող է անցնել ագրեսիվ բառերի կամ գործողությունների կիրառմանը: Մյուս չորս անդամների՝ *stizza, irritazione, indignazione, sdegno* բառերի

դեպքում առնչվում ենք զայրույթի համեմատաբար մեղմ դեպքերի հետ, երբ ըստ բացատրական բառարանների, զայրույթի ուժգնությունը չի հասնում այն աստիճանի, որ հանգեցնի ինքնատիրապետության կորստի:

- Հոմանիշային շարքի երկու անդամներ՝ *collera* և *stizza* բառերը, տարբերվում են մյուս անդամներից հույզի առաջացման հանկարծակիության հատկանիշով:
- Կարճատև կամ վաղանցիկ զայրույթն արտահայտվում է անդամներից երկուսի՝ *stizza* և *furia* բառերի միջոցով: Սակայն ի տարբերություն *stizza* բառի, որը բնութագրվում է որպես կարճատև զայրույթ, *furia* բառի դեպքում պարզապես նշվում է, որ այս տեսակի զայրույթը կարող է նաև լինել կարճատև, այդ պատճառով աղյուսակում այդ բառի դիմաց առկա են միաժամանակ + և - նշանները:
- *Ira* բառով արտահայտված զայրույթը ենթադրում է վրեժի բուռն ցանկություն: Սակայն սա միակ բաղադրիչը չէ, որով *ira* բառը առանձնանում է հոմանիշային շարքի մյուս անդամներից. այն նաև միակն է, որն արտահայտում է համընդհանուր խռովություն, անհամերաշխություն, ինչպես նաև ունի կրոնական մոտիվներ:
- Հետաքրքիր է փաստել, որ զայրույթը կարող է լինել նաև արդարացի և ազնիվ: Խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ զայրույթի առաջացման պատճառը անարդարությունն է, բարոյական սկզբունքների ոտնահարումը: Իմաստային այս բաղադրիչը առկա է *ira*, *indignazione* և *sdegno* բառերի իմաստային դաշտում:
- Բնության տարրերի վերաբերյալ փոխաբերական կիրառությամբ առանձնանում են *rabbia*, *ira*, *collera*, *furore*, *furia* բառերը:
- Իմաստային բաղադրիչների ամբողջական համընկնումով բացարձակ հոմանիշներ են *indignazione* և *sdegno* բառերը: Բացարձակ հոմանիշներ կարող են համարվել նաև *rabbia* և *furore* բառերը, եթե չանդրադառնանք *rabbia* բառի ծագումնաբանությանը և սկզբնական իմաստներին, այլ դիտարկենք միայն համաժամանակյա տեսանկյունից:

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ «զայրույթ» հուզական հասկացության ամբողջական ծավալը հնարավոր չէ արտահայտել մեկ բառային միավորի միջոցով: Տվյալ հասկացության ողջ բովանդակային պլանը ընկալվում է միայն նրա անվանման բառային միջոցների հոմանիշային շարքը վերլուծելու դեպքում, քանի որ այդ շարքի յուրաքանչյուր անդամ իր իմաստային բաղադրիչներով կարող է համապատասխանել արտալեզվական իրականության որևէ կոնկրետ իրավիճակի: Հայտնի է, որ հույզերն իրենց բնույթով ճանաչողական են և իրավիճակային, իսկ վերլուծությունը ցույց է տալիս, որ հույզերի արտահայտման միջոցների ընտրությունը նույնպես իրավիճակային է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մուրիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, ԵՊՀ հրատ., 1999:
2. Дорофеева Н.В. Удивление как эмоциональный концепт (на материале русского и английского языков): Дис. ...канд. филол. наук, Краснодар, 2002.

3. Diller H.J. Emotions and the Linguistics of English // Proceedings of the Conference of the German Association of University Professors of English, vol. 14. Tübingen, Niemeier, 1992.
4. Cinti D. Dizionario essenziale, Nuovo dizionario dei sinonimi e dei contrari, Novara, Deaprinting, 2006.
5. De Mauro T. Il dizionario della lingua italiana, Paravia, Bruno Mondadori, 2000.
6. Sabatini F., Coletti V. Dizionario Italiano Sabatini Coletti, Firenze, Giunti, 1999.
7. Dizionario Garzanti di italiano, Milano, Garzanti, 2006.
8. Dizionario Treccani (Vocabolario on line): <http://www.treccani.it/vocabolario/>

**Г. ТОНОЯН – Синонимический ряд номинантов эмоционального концепта “гнев” / “rabbia” в итальянском языке.** – Целью данной статьи является изучение лексических средств номинации эмоционального концепта “гнев” (“rabbia”) в итальянской лингвокультуре. В статье проведен компонентный анализ существительных, составляющих синонимический ряд слова “rabbia”. В результате анализа выделены специфические (варьирующиеся) семантические признаки, позволяющие разграничить лексемы, номинирующие эмоциональный концепт “гнев” в итальянском языке.

**Ключевые слова:** эмоциональный концепт, синонимический ряд, компонентный анализ

**G. TONOYAN – The synonymic group of words which express the concept of “anger” (rabbia) in the Italian language.** – The aim of the present paper is the study of lexical means which express the emotional concept of “anger” (“rabbia”) in Italian linguoculture. A componential analysis has been applied to the definitions of the members of the synonymic group of the word “rabbia”. As a result of analysis some distinctive semantic features have been revealed which allow us to distinguish the semantic fields of the lexemes that express the emotional concept of “anger” in the Italian language.

**Keywords:** emotional concept, synonymic group, componential analysis